ԳԼՈՒԽ ԻԸ.

Արշաւանք Թամարայ 'ի Պաղեստին. Առումն Երուսաղէմի։ Հեթում Բ. որբայ Հայոց. Շինութիւնք նորին։ Մելիք Նասր։ Աւանն Ռեմղէ և կոթող նորին։ Արարական ազգանագրութիւնք։

ՅԱՂԱԳՍ դալստեան Թամարայ զրկ Յոյն Արարացի պատմիչն, յորմէ առեալ դնեմք ասասանօր. «Պապն Հռոմայ Նիկողոս Դ. զրեաց առ ամենայն թագաւորս առնուլ զկնքդէմ այլազգեաց, և արտաքսել զնոսա յԵրուսաղէմէ, եւ ազատել զՍ. Տեղիս 'ի ձեռաց նոցին. զրեաց նաեւ առ կայսրն Յունաց 'ի Կոստանդինուպոլիս, եւ առ երիցարդ նորա, որ նստէր 'ի Տրապիզոն. առ թագաւորն Հայոց Հեթում Բ. առ թագաւորս Կիպրոսի, և Վրաց, և առ Խաղանն Մողոլաց Ղազան Խան որդի Արղուն Խանի։ Բայց ոչ ոք 'ի քրիստոնեայ թագաւորաց արար բանից նորա պատասխանի։ Իբրեւ եհաս պատգամաւորն առ Ղազան Խան և մատոյց առ նա զթուղթ Պապին, յորում խընդրէր ազատել զԵրուսաղէմ 'ի ձեռաց Սուլթանացն Եգիպտոսի, ուրախ եղեւ յոյժ ընդ այսպիսի խնդիրս նորին։ Իսկ եւ իսկ եհան հրաման գումարել զօրաց 'ի բանակս, միաբանեաց ընդ իւր զթագաւորս Հայոց, Վրաց և Կիպրոսի, և անհամար բազմութեամբ հասին 'ի կողմանս Եմէս քաղաքին, այն է Հոմս, ուր հարեալ էր զբանակ իւր Սուլթանն Եգիպտոսի։ Եւ 'ի խմբել մարտին, պարտեցաւ Սուլթանն, և կոտորեցան բազումք 'ի զօրաց նորին, և այլքն եղեն փախստական։ Անձնատուր եղեն Թամարայ Բերիա և Դամասկոս. և անտի դիմեալ հասին յԵրուսաղէմ. տեսեալ բնակչաց քաղաքին զբազմութիւնս նոցա, զահի հարան յոյժ, և առանց բանս ինչ զմնաւ ածելոյ բացին առաջի նոցա զդրունս քաղաքին, և Ղազան Խան և որք ընդ նմա մտին փառաւք 'ի ներքս, և գնացին զէպ ուղիղ յեկեղեցին Ս. Յարութեան և երկիրպագին Գերեզմանին Քրիստոսի ընդ այլ ուխտաւորս քրիստոնէից։ Զկառավարութիւն Երուսաղէմի յանձն արար Խաղանն թագաւորին Հայոց Հեթմոյ, որ եւ Մարինոս Լատին կոչէ զնա զօրա-